ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՐԸ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՄԻՋՈՑՈՎ ՀԱՐԱՎ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱԶՄԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր - «փափուկ ուժ», մշակույթ, կոնսոցիատիվ ժողովրդավարություն, Հարավային Կովկաս, բազմական հասարակություններ:

«Փափուկ ուժի» ռազմավարության մշակութային հենքը Հարավ-կովկասյան տարածաշրջանի բազմական հասարակություններում, մասնավորապես՝ Վրաստանի և Ադրբեջանի դեպքերի ուսումնասիրության պարագայում ժողովրդավարացման ներդաշնակ մոդելի մշակման և ներդրման վերաբերյալ որոշ հետազոտությունների[1] արդյունքներով հիմնավորվել է, որ տարածաշրջանային կայունության և փոխինտեգրման, անվտանգության մակարդակի բարձրացման և արդիականացման առումով առավել արդյունավետ կարող է լինել կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելը, որի կիրարկման համար նախ և առաջ անհրաժեշտ է ձևավորել քաղաքացիական հասարակության որոշակի մակարդակ բազմականության սեգմենտների պարագայում էլիտաների ձևավորման նպատակով, ինչն անհրաժեշտ տարր է կոնսոցիատիվության հայեցակարգի գործնական արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Դա նշանակում է, որ չնայած կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսական և հայեցակարգային հիմքերի համապատասխանությանը հարավ-կովկասյան բազմական հասարակությունների կառուցվածքային առանձնահատկություններին՝ այնուամենայնիվ, անհրաժեշտ է նաև մշակել որոշակի և հստակ գործիքակազմ, որը գործնականում հնարավորություն կստեղծի կոնսոցիատիվության գաղափարի պարզաբանման,

[1] Տե՛ս **Շիրինյան Լ., Սուքիասյան Հ., Օրդուխանյան Է.,** Հարավային Կովկասը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում: Լիմուշ հրատ., Երևան, 2018, 136 էջ; Կոնսոցիատիվ ժողովրդավարություն. քաղաքական կազմաբանությունը և իրացման ներուժը: ՀՀ ԳԱԱ ՓՍԻԻ, գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2017, 116 էջ:

տարածման և բազմական հասարակության տարբեր սեգմենտների գիտակցության մեջ դրա անհրաժեշտության հիմնավորման և ներդրման համար:

Այս հարցում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրարկման հաջողության հավանականությունը մեծապես կախված է ճշգրիտ ռազմավորության ընտրությունից: Սա ենթադրում է, որ այդ նպատակով որևէ ռազմավորության ընտրության հարցում պետք է հաշվի առնվեն բազմական հասարակությունների սեգմենտային առանձնահատկությունները, դրանց միջև փոխկապակցված, փոխլրացնող, ինչպես նաև հակադրական շահերը, ինչը պահանջում է բավականաչափ բարդ և հետևողական, միևնույն ժամանակ՝ նաև ժամանակատար աշխատանք:

Այս տեսանկյունից ժողովուրդների քաղաքակրթական հիմքերի ամրությունը, ինքնատիպությունը, մշակութային արժեքների և նմուշների աշխարհագրական տարածականությունը կարող են համարվել կարևոր գործոններ վերոգրյալ մոդելի կիրարկման դեպքում անհրաժեշտ նախադրյալների ձևավորման համար:

Պետության արտաքին քաղաքականության իրականացման և ազգային շահերի իրացման գործում կիրառվում են տարբեր գործիքներ, որոնք մեծապես կապված են «ուժի» կատեգորիայի հետ: Հարկ է նշել, որ տվյալ կատեգորիայի վերաբերյալ սահմանումների մեծամասնության դեպքում գոյություն ունի մի ընդհանուր բաղադրիչ, այն է՝ ազդեցության գործադրում ուրիշներին կառավարելու նպատակով: Տվյալ ազդեցությունը կարող է գործադրվել տարբեր միջոցներով, ինչն էլ իր հերթին լիարժեք հիմք է ստեղծում մատնանշելու ուժի կիրառման տարատեսակ ձևերը: Խոսքը վերաբերում է ինչպես «կոշտ ուժին», այնպել էլ «փափուկ ուժին»:

Այս պարագայում «փափուկ ուժը» հանդես է գալիս որպես «կոշտ» ուժի այլընտրանք, որը մեծապես պայմանավորվում է տնտեսական հզորություններով: «Փափուկ ուժը» միջազգային հարաբերություններում «համոզելու արվեստի» գործնականացման արդյունավետ մոտեցում է, որն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայի կողմից, ով «փափուկ ուժ» ասելիս հասկանում է ցանկալիին հասնելու կարողություն ոչ թե հարկադրանքի, այլ համոզելու միջոցով: Ջ. Նայն առանձնացնում է տվյալ հայեցակարգի երեք հիմնարար բաղադրիչները՝ մշակույթը, քաղաքական գաղափարախոսությունը և դիվանագիտությունը:[1]

Ինչպես հայտնի է՝ «փափուկ ուժի» միջոցների կիրառման դեպքում շեշտը դրվում է հասարակության և դրա առանձին խմբերի հետ աշխա-

[1] **Nye J.,** Soft Power: The Means to Success in World Politics. N.Y.: Public Affairs, 2004, pp. 10-13.

տանքի վրա, ինչը ներառում է նրանց միմյանց համադրելը, ինչպես նաև անհարմար տարրերի չեզոքացումը: Դա նպաստում է հասարակության հետագա ապաինտեգրմանը:[1]

Վերջին շրջանում «փափուկ ուժի» հայեցակարգն ավելի լայն գիտական հետաքրքրություն է առաջացնում հատկապես՝ գործնական քաղաքականությունների մշակման տեսանկյունից: Արդի ժամանակաշրջանում այն դիտվում է որպես պետության քաղաքական ազդեցության ընդլայնման առավել արդյունավետ գործիքներից մեկը: Սակայն որպես քաղաքական գործիք՝ «փափուկ ուժը» գործադրում է ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական և մշակութային ազդեցություն: [2] Այս իմաստով հարկ է նշել, որ «փափուկ ուժի» հասկացությունն ավելի ընդգրկուն է, քան հանրային, քաղաքացիական դիվանագիտությունը, պետությունների «բրենդավորումը» կամ քարոզչությունը: «Փափուկ ուժի» հայեցակարգը կենտրոնացվածությունը տեղափոխել է բացառապես գործնական հարցերից արտաքին և ներքին լսարանների վրա ներգործության սկզբունքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության դաշտ: Այս պարագայում կարևոր է նշել, որ ներգործության ուժային և հարկադրման մեթոդները չեն կիրառվում:[3]

«Փափուկ ուժի» գլխավոր իմաստն իշխանության համար գրավիչ կերպարի ձևավորումն է: Դա ենթադրում է մարդկանց վարքագծի վրա ներգործելու ունակություն՝ նրանց ստիպելով անել այն, ինչը որևէ այլ պարագայում նրանք երբեք չէին անի: Ըստ Ջ. Նայի՝ դրան հասնել հնարավոր է «տեղեկատվության և կերպերի իշխանության», իմաստների իշխանության օգտագործման միջոցով: Այլ կերպ ասած՝ «փափուկ ուժի» միջուկն ինֆորմատիվությունն է և տարբեր մշակույթներին հարմարվելու կարողությունը:[4]

«Փափուկ ուժը» ենթադրում է տարուղղորդված գաղափարական-արժեքային կառուցվածքներ, որոնք ծագում են տարբեր մշակույթներից, քաղաքական պրակտիկաներից և համարվում է այն միջավայրի արդյունք, որտեղ դրանք ձևավորվել են, և որոնք ունեն աշխարհի և դրանում իրենց տեղի մասին յուրահատուկ տեսլական: «Փափուկ ուժի» կարևորա-

---

[1] **Арешев А.,** «Мягкая сила» на Южном Кавказе - фактор решения проблем или их создания?, http://www.kavkazoved.info/news/2013/04/05/mjagkaya-sila -na-ujnom-kavkaze-faktor-reshenia-problem-ili-ih-sozdania.html, հղման ամսաթիվը՝ 08.05.2019:

[2] **Звягина Д.,** Культурное влияние как компонент «мягкой силы»//Исто рические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики. 2012. №11(25): в 2 ч. Ч.2., с. 94-98.

[3] **Гревцова А.,** Мягкая сила Китая как способ расширения его политического влияния на страны АСЕАН // Молодой ученый. 2012. №3., с. 313-315.

[4] **Раднаева В.,** Концепция «мягкой силы» в политической культуре Китая, Евразийство и мир 1/2017, с. 76-86.

գույն գործիքը սեփական մշակույթի, ավանդույթների, արժեքների, գաղափարների տարածումն է՝ կյանքի բոլոր ոլորտներում ներդաշնակության հասնելու նպատակադրումով:

«Փափուկ ուժի» պարագայում իշխող ընտրախավի մոտ պետք է լինի համոզում այն մասին, որ ինքն իր նպատակներին հասնելու գործում կարիք չունի դիմել կոշտ, բռնի և հարկադրական մեթոդների:

Ջ. Նայի կարծիքով՝ լեզուն և մշակույթը հենց ինքնին «փափուկ ուժ» են, որոնք վճռական դեր են խաղում միջազգային հարաբերություններում՝ ուղղակի կամ անուղղակի ազդելով համաշխարհային քաղաքականության և գործարար կապերի վրա: «Փափուկ ուժը» հիմնվում է բարոյական կատարելատիպերի և կենսակերպի դրական օրինակների գրավչության վերաբերյալ մշակումների վրա, որոնք հաստատվել են այս կամ այն մշակույթի մեջ: Այն ոչ թե նյութական գործոնների ուժն է, այլ տեղեկույթի և կերպերի ուժը: «Փափուկ ուժի» օգտագործումն արժեքների ուժի օգտագործումն է: Ավելի ուշ իր՝ «Իշխանության ապագան» աշխատանքում Ջ. Նայը լրամշակել է նախորդ սահմանումը՝ «փափուկ ուժը» հայեցակարգայնորեն նկարագրելով որպես «այլ պետությունների վրա ազդեցություն գործելու կարողություն սեփական նպատակների իրագործման համար, որտեղ որոշակի ոլորտներում համագործակցությունն ուղղված է համոզման և դրական ընկալումների ձևավորմանը»:[1]

«Փափուկ ուժի» հայեցակարգն առանձնահատուկ տրամաբանությամբ նկարագրում է մշակույթները՝ լայն իմաստով որպես արդի համաշխարհային քաղաքական գործընթաց, ինչը դիտվում է թե՛ տարածաշրջանային, թե՛ համաշխարհային չափումներով:[2] Այս առումով Հարավային Կովկասի տարածաշրջանի բազմական հասարակությունների դեպքում «փափուկ ուժի» միջոցով է հնարավոր կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրարկումը:

«Փափուկ ուժի» քաղաքականությունն իր շահերի և մոտեցումների առաջխաղացումը, դրանց խթանումը դիտում է համոզելու և իր երկիրը, հատկապես՝ մշակույթը հմայիչ, գրավիչ դարձնելու մեջ: Այս պարագայում այն հենվում է ոչ միայն իր նյութական ձեռքբերումների, այլև հոգևոր մշակույթի և մտավոր ներուժի վրա: Որպես կանոն՝ «փափուկ ուժին» են վերագրում պետության զարգացման ռազմավարությունը, նրա գաղափարախոսության և կողմնորոշիչ արժեքների ինքնանույնականացման ուժը, նրա սոցիալական կառուցվածքի և զարգացման մոդելի առինքնող ուժը, նրա ժողովրդի ամրացնող ուժը, ազգի ստեղծագործական ներուժը, մշա-

[1] **Харкевич М.,** «Мягкая сила»: политическое использование научной концепции. Вестник МГИМО Университета. 2014. № 2 (35). с. 22-30.

[2] **Горлова И.,** Теория и практика общественного развития, (2015, № 18), с. 268-272.

կույթի գրավչությունը և միջազգային հարաբերությունների վրա նրա ազդեցության ուժը: Այս բոլորը հոգևոր տարրեր են: Լինելով ոչ ակնհայտ և ոչ զգացական՝ «փափուկ ուժը» ներթափանցում է ամենուր:[1]

Ամենևին պատահական չէ «փափուկ ուժի» պարագայում Ջ. Նայի կողմից մշակույթի առաջնահերթության կարևորումը: Բանն այն է, որ առանց մշակույթի որևէ քաղաքական գաղափարախոսություն կամ դիվանագիտություն չի կարող իրացվել «փափուկ ուժի» սահմաններում: Հարավային Կովկասի բազմական հասարակությունների դեպքերի դիտարկումը վեր է հանում Արդրբեջանի դեպքում մշակութային ինքնատիպության բացակայության հանգամանքը, ինչը վկայում է, որ տվյալ պետությունը չունի մշակութային ներուժ ինքնուրույն, առավել ևս՝ մեկ դոմինանտ թյուրքական էթնոսի միջոցով իրականացնելու արդյունավետ ժողովրդավարացում՝ իրավահավասարության հնարավորություն տալով անդրենաձին էթնոսներին: Սակայն դա չի նշանակում, որ անդրենաձին էթնոսները պետք է հրաժարվեն իրավահավասարության, էլիտաների ձևավորման իրենց ձգտումներից և շարունակեն գոյատևել էթնիկ ավտորիտարիզմի պայմաններում: Կարևոր է ընդգծել, որ Ադրբեջանի անդրենաձին էթնոսները՝ որպես բազմական հասարակության ազգային, լեզվական ինքնուրույն սեգմենտներ, ունեն մշակութային որոշակի ինքնատիպություն, ինչը կարող է հնարավորության դեպքում նպաստավոր պայմաններ ստեղծել ազգային էլիտաների ձևավորման, հետևապես՝ նաև «փափուկ ուժի» միջոցով կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման համապատասխան հիմքերի մշակման համար:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այս պարագայում խնդիրն այլ է: Ժողովրդավարացման առումով վրացական փորձն ավելի հաջող է: Սակայն հարկ է նշել, որ Վրաստանի բազմական հասարակությունում նկատելի են էթնիկ ժողովրդավարության[2] որոշ տարրեր և դրսևորումներ, երբ ոչ վրացի էթնոսները, որոնք ունեն իրենց ազգային, լեզվական, կրոնական, մշակութային ինքնությունը, որոշ դեպքերում ճնշվում են որպես ենթակա սեգմենտներ: Սակայն այդ սեգմենտները, ի տարբերություն ադրբեջանական բազմական հասարակության, ունեն մշակութային ավելի մեծ ներուժ: Դա նշանակում է, որ «փափուկ ուժի» միջոցով կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման իմաստով Վրաստանի բազ-

[1] **Горлова И.,** ... նշվ. աշխ., էջ 269:

[2] Տե՛ս **Freni S.,** Georgia as an Ethnic Democracy: a Study on the Azerbaijani and Armenian Minorities under Mikheil Saakashvili. September 2011, 44 p. հասանելի է առցանց՝ http://www.minorities-network.org/wp-content/uplo
ads/2014/09/Georgia_as_an_Ethnic_Democracy-libre.pdf (25.07.2019)

մական հասարակությունում ազգային էլիտաների ձևավորումը կարող է լինել ավելի դյուրին, քան դա հնարավոր է Ադրբեջանի դեպքում:

Ակնհայտ է, որ արդի պայմաններում պետության տեղը և դերը միջազգային հարաբերություններում որոշվում է ոչ միայն նրա տնտեսական և ռազմական ռեսուրսներով, քաղաքական ինստիտուտների կայացման աստիճանով, այլև՝ նրա մշակութային ներուժով: Մշակույթի բնագավառում միջազգային համագործակցությունը արդի պետությունների արտաքին քաղաքականության անօտարելի մասն է, քանի որ մշակույթն ունի հատուկ դերակատարություն արտաքին քաղաքական խնդրակարգի մշակման և իրականացման, պետության միջազգային դիրքի ամրապնդման և վարկի բարձրացման առումներով, ինչն ապահովում է պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմաններ: 20-21-րդ դարերում արդիականցման լավագույն օրինակները պայմանավորված են հենց համապատասխան ժողովուրդների մշակութային հենքով: Դա նշանակում է, որ պետությունների արտաքին քաղաքականության մեջ մշակութային բաղադրիչի առկայությունն իրենց շահերի իրացման տեսանկյունից կարող է ապահովել բավականին հաջող արդյունքներ:

Արտաքին մշակութային քաղաքականությունը, ըստ էության, կարող է տարանջատվել պաշտոնականի և ոչ պաշտոնականի: Հարկ է նկատել, որ պաշտոնական արտաքին մշակութային քաղաքականությունը ձևավորվում և իրացվում է կառավարական մարմինների՝ հատկապես՝ մշակույթի նախարարության կողմից: Այդ իսկ պատճառով «փափուկ ուժի» իրացման հարցում մշակութային պետական քաղաքականության զարգացման և կատարելագործման հարցը խիստ կարևոր տեղ ունի ինստիտուցիոնալացված կառավարությունների օրակարգում: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ ՀՀ-ի պարագայում, որի մշակութային ժառանգության տարածականությունը հարավ-կովկասյան տարածաշրջանում և ոչ միայն, բավականին մեծ է, արտաքին մշակութային քաղաքականության մշակումը պետք է լինի կառավարության առաջնահերթություններից: Այս հարցի կարևորումը խիստ անհրաժեշտ է, քանի որ իր մշակութային ինքնությամբ, ինքնատիպությամբ և դրա տարածականությամբ, մշակութային ներուժով ՀՀ-ն ունի առավել մեծ հնարավորություններ «փափուկ ուժի» ռազմավարության մշակման և իրականացման իմաստով՝ միտված տարածաշրջանում իր քաղաքական սուբյեկտության, ինչպես նաև՝ ազդեցության բարձրացմանը: Մշակութային հենքի վրա համապատասխան տեսական և հայեցակարգային հիմքերի մշակման դեպքում, ինչպես նաև քաղաքական գործընթացում ներքին և արտաքին մարտահրավերների հաշվառումով, ժողովրդավարացման ուղուց չշեղվելու դեպքում ՀՀ-ի՝ որպես «տարածաշրջանային ժողովրդավարության արտահանողի» հնարա-

վորությունները կարող են կտրուկ բարձրանալ: Այդ իսկ պատճառով քաղաքական էլիտայի արդիականացումը, ինչպես նաև քաղաքացիական մշակույթի հետևողական զարգացումը ՀՀ-ում պետք է լինեն անընդհատ գործընթաց: Միայն այս պարագայում է, որ կարող է իրատեսական դառնալ ՀՀ-ի կողմից «փափուկ ուժի» գործադրմամբ հարավ-կովկասյան բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման խթանումը:

Հաշվի առնելով արտաքին մշակութային քաղաքականության կարևորությունը՝ արդի շրջանում կարող է շատ ավելի մեծանալ տարբեր կազմակերպությունների դերը, որոնք նպաստում են ազգային մշակույթի և լեզվի տարածմանը արտասահմանում: Դա թույլ կտա մշակութային ինքնությունների իրավահավասարեցման քաղաքականության կիրառության միջոցով կազմակերպել և իրականացնել կառուցողական երկխոսություն այլ պետությունների հետ: Այս իմաստով հարավ-կովկասյան բազմական հասարակությունների դեպքում կոնսոցիատիվ խոսույթի գործածությունը կարող է դառնալ միջսեգմենտային փոխլրացնող երկխոսության ձևավորման նախադրյալ այն պարագայում, երբ տվյալ սեգմենտները կհաջողեն նախ և առաջ ձևավորել իրենց ինքնուրույն էլիտաները:

Եթե վերլուծենք արդի պետությունների ոչ պաշտոնական արտաքին մշակութային քաղաքականությունները, ապա ամենաընդհանրական ձևով հնարավոր է ընդգծել դրանց հիմնական տարրերը, որոնց շարքում առավել ազդեցիկ են ֆիլմարտադրությունը, շոու-բիզնեսը և ԶԼՄ-ները: Առաջին երկուսը ոչ պաշտոնական արտաքին մշակութային քաղաքականության կարևորագույն բաղադրիչներն են: Հաշվի առնելով բնակչության տարբեր շերտերի մոտ դրանց մեծ ժողովրդականությունը՝ դրանք նաև նպաստում են տվյալ պետության արտաքին կերպարի ձևավորմանը միջազգային մակարդակում: «Փափուկ ուժի» կիրառման նպատակով ՀՀ-ի կողմից վերը նշված միջոցների, գերծիքների զարգացումը և կիրառումը հնարավորություն կստեղծի սեփական մշակութային արժեհամակարգի և ժառանգության վերհանման, դրանց վերարժևորման և տարածման համար: Այդ պարագայում հարավ-կովկասյան տարածաշրջանում առավել տարածական մշակութային ժառանգություն ունեցող հայ ժողովուրդը կարող է վերակերտել իր քաղաքակրթական արժեքը՝ ապագայում տարածաշրջանային տերության վերածվելու տեսլականով:

Արտաքին ոչ պաշտոնական մշակութային քաղաքականության ոչ պակաս կարևոր բաղադրիչ են նաև ԶԼՄ-ները, որոնց օգնությամբ ձևավորվում և փոփոխվում է հասարակական կարծիքը, տարածվում է շոու-բիզնեսի արտադրանքը: Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի տարածման իմաստով հայկական բազմալեզու ԶԼՄ-ների ստեղծումը՝

մասնավորապես տարածաշրջանի բազմական հասարակությունների լեզվական սեգմենտների հաշվառումով, կարող է էլ ավելի արդյունավետ դարձնել ՀՀ-ի կողմից «փափուկ ուժի» միջոցով կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրմանն ուղղված խթանիչ աշխատանքը:

«Փափուկ ուժի» հաջորդ բաղադրիչը քաղաքական գաղափարախոսությունն է, ինչն առավել կարևոր է մեր առաջադրած խնդրի տեսանկյունից, քանի որ կոնսոցիատիվ մոդելի համապատասխանության, դրա արդյունավետության մեջ համոզման գործում քաղաքական և գաղափարական մոտեցումը խիստ անհրաժեշտ է դառնում: Այս առումով քաղաքական գաղափարախոսություն ասելիս պետք է ի նկատի ունենալ հասարակության քաղաքական և տնտեսական կառուցվածքում առկա սկզբունքների համակարգը, որը հենվում է որոշակի արժեքների վրա: Առանց դրա հաշվառման և պատշաճ գնահատման հնարավոր չէ արդյունավետորեն իրացնել «փափուկ ուժը»՝ առավել ևս դրա մշակութային բաղադրիչը: Կոնսոցիատիվ մոդելի կիրարկման տեսանկյունից վերը նշված գործոնների հաշվառումը դրական արդյունքի հասնելու հարցում դառնում է առաջնահերթություն:

2018թ. ՀՀ-ում տեղի ունեցած «հեղափոխական փափուկ գործընթացը» իրապես ստեղծել է հստակ նախադրյալներ ուրույն քաղաքական գաղափարախոսության մշակման համար: Այս դեպքում անհրաժեշտ է չհեռանալ հեղափոխության իդեալներից ու արժեքներից և դրանք վերածել քաղաքական գաղափարախոսության, ինչն էլ ավելի իրատեսական հնարավորություններ կստեղծի ՀՀ-ի կողմից «փափուկ ուժի» իրականացման համար:

Արտաքին քաղաքականության իրականացման գործում յուրաքանչյուր պետություն պաշտպանում և առաջ է մղում իր սեփական քաղաքական գաղափարախոսությունը և դրա հետ անկապտելիորեն կապված քաղաքական արժեքները: Այս նպատակով պետություններն իրականացնում են պաշտոնական և ոչ պաշտոնական արտաքին մշակութային քաղաքականություն, մասնավորապես՝ ուսանողների և երիտասարդ գիտնականների փոխանակման տարբեր ծրագրեր, որոնց միջոցով նրանց գիտակցության մեջ ներմղվում են որոշակի քաղաքական արժեքներ: Իսկ եթե նրանք հետագայում ստանձնեն բարձր, ղեկավար պաշտոններ, ապա մեծ է հավանականությունը, որ նրանք կառաջնորդվեն իրենց գործողություններում հենց այդ արժեքների հիման վրա ձևավորված վարքագծով:

Հարավ-կովկասյան բազմական հասարակություններում տեղական առանձնահատկությունների հաշվառումով կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի տեղայնացման նպատակով պետք է կազմակերպվեն միջազգային-տարածաշրջանային գիտաժողովներ, կլոր-սեղաններ, քննար-

կումներ, որոնք հարթակ կստեղծեն այդ հայեցակարգի համապատասխանության և առավելությունների մասին հանրային իրազեկման ու դրա հետագա տարածման համար: Այսպիսի նախաձեռնությունները կարող են դիտվել որպես «փափուկ ուժի» իրականացման արդյունավետ գործիքներ:

«Փափուկ ուժի» գործադրման մեկ այլ միջոց է ոչ պաշտոնական դիվանագիտությունը, ինչը ենթադրում է այլ պետությունների հետ երկխոսության հաստատում հաղորդակցության մեջ ոչ պաշտոնական անձանց ներգրավման միջոցով, ինչպիսիք են՝ գիտնականները, լրագրողները, նախկին դիվանագետները, զինվորականները և այլք: Այս մոտեցումը դիվանագիտության տվյալ ձևը դարձնում է ավելի ճկուն: Այս առումով մեծ կարևորություն է տրվում տարբեր ոչ կառավարական կազմակերպություններին, որոնց դերը գլոբալացման պայմաններում ստանում է էլ ավելի մեծ նշանակություն:

Արդյունաբերականից տեղեկատվական հասարակության անցումով ավանդական ԶԼՄ-ներից բացի, մշակութային արժեքների և քաղաքական գաղափարների տարածումն իրականացվում է նաև համացանցի տարբեր տեխնոլոգիաների միջոցով, ինպիսիք են՝ սոցիալական ցանցերը, բլոգները, տարատեսակ մեդիա-հարթակները: Այս առումով համացանցում ևս հստակ քաղաքական նպատակադրումով ակտիվությունը կարող է որպես արդյունավետ գործիք ծառայել հարավ-կովկասյան բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի խրախուսման համար:

Աշխարհի զարգացած երկրները տարբեր կերպ են սահմանում «փափուկ ուժի» իրենց առաջնահերթությունները և հայեցակարգային մոտեցումները: Մեծ Բրիտանիայի համար դրանք հիմնվում են անգլո-սաքսոնյան քաղաքական արժեքների վրա: Գերմանիայի դեպքում կարևորվում են լեզուն և մշակույթը, այդ թվում՝ նաև Գյոթեի ինստիտուտների միջոցով: Իտալիայի դեպքում կարևորվում է պատմամշակութային արժեքների առաջխաղացումը: Չինաստանի դեպքում կարևորվում են զարգացման ոչ բռնի գործիքների միջոցով ազդեցությունները, ինչպես նաև ազգային մշակույթի պաշտպանությունը մեծապես Կոնֆուցիոսի ինստիտուտների միջոցով: ԱՄՆ-ի համար առաջնահերթ է ամերիկյան քաղաքական և տնտեսական արժեքների առաջխաղացումը, իսկ ԵՄ-ի համար՝ եվրոպական սոցիալական և մշակութային արժեքների առաջխաղացումը:[1]

Հենց մշակութային դիվանագիտությունն է, որն ամենաարդյունավետ գործիքը կարող է դառնալ «փափուկ ուժի» միջոցով տարակերպ շահերի սպասարկման գործում: «Փափուկ ուժի» գործադրումը՝ մասնավո-

[1] **Горлова И.,** Теория и практика общественного развития, (2015, № 18), с. 269.

բապես դրա մշակութային ազդեցության առումով կարող է հանգեցնել այլ երկրների մշակութային կոդերի փոփոխության՝ փոխելով տեղական քաղաքական և մշակութային էլիտաները՝ ստեղծելով իր սեփական առասպելականացված կեղծ կոդերը: Հարավ-կովկասյան բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի հարմարեցման կամ կիրարկման գործում մշակութային դիվանագիտությունն առաջնային անհրաժեշտություն է ստանում: Այս դեպքում առաջնահերթ է նաև միջազգային հարթակներում ձևավորել և առաջ մղել սեփական պետության դրական կերպարը՝ որպես ընդօրինակելի: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է բացահայտել սեփական ժողովրդի ժողովրդավարական ներուժը՝ առանց կուրորեն ընդօրինակելու այլ պետությունների ժողովրդավարության մոդելները:

Հայկական մշակույթը և հայերենը կարող են ՀՀ-ի կողմից «փափուկ ուժի» քաղաքականության մշակման, զարգացման և կիրարկման գործիքներ դառնալ: Այս տեսանկյունից օրինակ՝ Վրաստանի դեպքում անհրաժեշտ է օգտագործել նաև հայալեզու և վրաստանաբնակ այլ անդրենածին էթնոսների ազգային լեզվական սեգմենտը՝ որպես կոնսոցիատիվ ժողովրդավարության սեգմենտար տարբերության բնորոշ գիծ: Կոնսոցիատիվ խոսույթի միջոցով համապատասխան քաղաքական արժեքների տարածումը կարող է համարվել «փափուկ ուժի» գործադրման արդյունավետ միջոց: Սա նշանակում է, որ ՀՀ-ն ամեն կերպ պետք է աջակցի Վրաստանի հայախոս ազգային սեգմենտին իր արժեհամակարգից չհեռանալու համար:

Քաղաքականությունը և մշակույթը հանդես են գալիս որպես «փափուկ ուժի» անբաժան, փոխլրացնող համակարգային բաղադրիչներ: Քաղաքականության ուժը գործառնական ուժ է, իսկ մշակույթի ուժը ռեսուրսային ուժ է:[1]

Այս առումով Լ. Վելիչկոն նշում է, որ Հարավային Կովկասում «փափուկ ուժի» գործադրման ակնհայտ հավակնություններ է ցուցաբերում Թուրքիան, որը վերջին տասնամյակի ընթացքում ընդարձակում է իր տնտեսական և քաղաքական ներուժն այդ տարածաշրջանում: Այս քաղաքականությունը լայն թափ է ստացել հետխորհրդային շրջանում, երբ Թուրքիան տարածաշրջանային տերության հստակ հավակնություններ սկսեց ցուցաբերել՝ փոխելով իր ռազմավարական վարքագիծը:[2] Սակայն հարկ է նշել, որ մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս,

[1] **Тарабарко К.,** «Мягкая сила» культуры: эволюция концепции в трудах китайских ученых. Тамбов: Грамота, 2016. № 7(69): в 2-х ч. Ч. 2, с. 181-184.

[2] **Величко Л.,** Политика «мягкая силы» Турции в регионе Южного Кавказа (1991-2002 гг.): проблемы реализации. Исторические науки и археология. УДК 94(5), с. 44-52.

որ Թուրքիայի դեպքում «փափուկ ուժի» միջոցով Հարավային Կովկասում հաջողությունների արձանագրումը, թերևս, կեղծ է, ոչ հիմնավոր և անհնար է այն պատճառով, որ նախ և առաջ Թուրքիան չունի ուրույն մշակութային ինքնություն, նրա հարավ-կովկասյան քաղաքականությունը մեծապես հիմնված է տնտեսական գործիքների վրա և հետևապես՝ մշակութային գործիքներով նրա շահերի տարածումը չի կարող հավատարժան լինել: Էլ ինչ խոսք ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի վարած ժխտողական և շրջափակման քաղաքականության մասին, ինչը ոչ թե «փափուկ ուժի», այլ «կոշտ ուժի» իրացման ուղղակի դրսևորում է: Թուրքիան իր հարավ-կովկասյան հավակնություններում կարող է հաջողել միայն տնտեսական բաղադրիչի և գործիքների գործադրմամբ, ինչն ամենևին «փափուկ ուժ» համարվել չի կարող: Դա նշանակում է, որ Թուրքիան չունի Հարավային Կովկասում «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման մշակութային ներուժ, իսկ նման պնդումներն էլ ուղղակի քաղաքական ձեռնածություն են:

Իր մշակութային ներուժով, որի ժառանգության նմուշները կարելի է գտնել ոչ միայն ժամանակակից Թուրքիայում, հարավ-կովկասյան տարածաշրջանում և այլ բնակավայրերում, միայն ՀՀ-ն է, որ ապրիորի ունի տեսական անհրաժեշտ հիմքեր «փափուկ ուժի» արդյունավետ քաղաքականություն մշակելու և ապագայում իրացնելու համար: Այս գիտակցումը պետք է ՀՀ-ի այսօրվա և հաջորդ կառավարությունների օրակարգային անհետաձգելի բովանդակության մի մասը լինի: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի համապատասխանությամբ և գործադրմամբ հարավ-կովկասյան բազմական հասարակությունների արդիականացման վերաբերյալ հեռանկարային ուսումնասիրությունները ևս իրականացվում են մեծապես հայ հետազոտողների կողմից:

«Փափուկ ուժի» ռազմավարության կիրարկումը մշակութային ռելյատիվիզմի միջոցով Հարավային Կովկասի բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման նպատակով մշակութային ռելյատիվիզմի հայեցակարգի կարևորումը կարող է դիտվել որպես «փափուկ ուժի» քաղաքականության գործուն նախապայման: Հաշվի առնելով հարավ-կովկասյան բազմական հասարակություններում առանձին ազգային սեգմենտների ինքնատիպ մշակութային առանձնահատկությունների ներդաշնակ համագոյակցության անհրաժեշտությունը՝ հարկ է մշակել համապատասխան քաղաքականություն, որը թույլ կտա առավել արդյունավետացնել տարածաշրջանային կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանն ուղղված գործընթացները՝ մասնավորապես «փափուկ ուժի» ռազմավարության գործածության միջոցով: «Փա-

փուկ ուժը»՝ որպես արտաքին քաղաքական ազդեցության տարածման գործիք, առավել ևս տարակերպ կոնֆլիկտներով առանձնացող հարավ-կովկասյան տարածաշրջանում, կարող է նպաստել դրանց խաղաղ կարգավորման նախապայմանների մշակմանը, որտեղ առավել ընդգծված և տարածված մշակութային ժառանգություն ունեցող ժողովուրդները հնարավորություն կստանան դառնալ «փափուկ ուժի» իրացման գործում առաջամարտիկներ:

Համեմատ տարածաշրջանային մյուս պետությունների և ժողովուրդների՝ ՀՀ-ի և հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը հարավ-կովկասյան տարածաշրջանում կարելի է համարել ամենատարածվածը: Թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի տարբեր բնակավայրերում հայկական մշակութային ժառանգության բազմաթիվ նմուշներ կան՝ չնայած տեղի իշխանությունների կողմից դրանց հետևողական յուրացման և/կամ ոչնչացման փաստերին: Դա նշանակում է, որ հայկական մշակույթի հետքերի վերացմանն ու յուրացմանն ուղղված որոշակի քաղաքականությունը ՀՀ-ի՝ առաջիկայում տարածաշրջանային քաղաքական հավակնությունների սահմանափակմանն ուղղված կազմակերպված գործողությունների շղթա է: Հայկական մշակութային ներուժը բավականին մեծ է այս առումով, և հետևապես՝ տարածաշրջանային մակարդակում «փափուկ ուժի» կիրառության տեսանկյունից ՀՀ-ի հնարավորություններն անհամեմատ մեծ են: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հայերը դարեր ի վեր բնակվել են թե՛ այսօրվա Ադրբեջանի և Վրաստանի տարածքում՝ թողնելով մշակութային հսկայական ժառանգություն, թե՛ այսօր էլ շարունակում են բնակվել Ջավախքում, ինչպես նաև Վրաստանի այլ բնակավայրերում՝ կրկին ստեղծելով մշակութային արժեքներ: Սակայն Վրաստանի պարագայում ևս հայկական մշակութային ժառանգության դեմ տարվում է որոշակի քաղաքականություն: Սա ևս վկայում է տարածաշրջանում հայկական գործոնի հնարավորինս նվազեցման և քաղաքական հավակնությունների սահմանափակման մասին: Այսպիսի իրավիճակում ՀՀ-ն պետք է մշակի հստակ տարածաշրջանային քաղաքականություն, որը կներառի, ըստ էության, իր մշակութային հենքի բոլոր առավելությունները, ինչպես նաև կհաշվառի բոլոր ռիսկերը: Եվ որպես տարածաշրջանի բազմական հասարակություններում որոշակի էթնիկ, ազգային, լեզվական, կրոնական սեգմենտների համար գրավիչ քաղաքական գաղափարախոսություն, որպես ժողովրդավարացման և ներդաշնակ զարգացման մոդել, առաջարկի կոնսոցիատիվ ժողովրդավարությունը «փափուկ ուժի» գործիքակազմի գործածության միջոցով: Այս մոդելը հարավ-կովկասյան անդրենածին ժողովուրդների իրավահավասարության, ազգային շահերի ագրեգացման տեսանկյունից կարող է դառնալ ամենագրավիչ մոդելը:

Հետևապես՝ հարավ-կովկասյան տարածաշրջանի անդրենածին ժողովուրդները պետք է «փափուկ ուժի» միջոցով իրազեկվեն կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի հայեցակարգային առանձնահատկությունների, բազմական հասարակություններում դրա համապատասխանության և առավելությունների մասին: Միայն այդ ճանապարհով է հնարավոր այդ սեգմենտների գիտակցության մեջ ձևավորել ժողովրդավարության տվյալ մոդելի հետ ինքնանույնականացման ցանկություն, ինչը հնարավորություն կտա ձերբազատվել գերակա էթնոսների գերիշխանական ազդեցությունից և նրանց հետ դառնալ իրավահավասար: Այս հարցում մշակութային ռելյատիվիզմի խրախուսումը կրկին «փափուկ ուժի» միջոցով կարող է ծառայել որպես օժանդակ գործիք:

Ժամանակակից հասարակություններում, որտեղ տարբեր մշակույթների ներկայացուցիչները ստիպված են մշտապես փոխգործակցել, էթնոցենտրիզմը կարող է դառնալ վնասակար և նույնիսկ վտանգավոր երևույթ: Էթնոցենտրիզմը խոչընդոտում է նաև տարբեր մշակույթների գիտական, օբյեկտիվ ուսումնասիրությանը, այլ մշակույթների և ավանդույթների կրողների վարքագծի ադեկվատ ընկալմանը: Էթնոցենտրիզմին հակադրվող դիրքորոշումը մշակութային ռելյատիվիզմն է, որի համաձայն յուրաքանչյուր մշակույթ բացառիկ երևույթ է և պետք է դիտվի նրանում ընդունված չափանիշներին համապատասխան:[1]

Մշակութային ռելյատիվիզմի գլխավոր գաղափարը տարբեր ժողովուրդների կողմից ստեղծված և ստեղծվող մշակութային արժեքների հավասարության ճանաչումն է: Սա ենթադրում է յուրաքանչյուր մշակույթի ինքնուրույնության և ամբողջականության ճանաչում, ինչպես նաև էթնոցենտրիզմից բացարձակ հրաժարում:[2] Հետևապես՝ հարավ-կովկասյան բազմական հասարակություններում էթնոցենտրիզմի հաղթահարման կարևոր նախապայման կարող է դառնալ մշակութային ռելյատիվիզմը: Սա իր հերթին կարող է նպաստել նաև կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ կիրառման պայմանների մշակմանը՝ որպես «փափուկ ուժի» քաղաքականության իրականացում:

Մ. Հերսկովիցն առանձնացնում է մշակութային ռելյատիվիզմի երեք ասպեկտ՝ մեթոդաբանական, փիլիսոփայական և գործնական: Մեթոդաբանականը վերաբերում է տվյալ ժողովրդի մոտ ընդունված նորմերի և արժեքների համաձայն մշակույթի ճանաչման ձևին: Այսինքն՝ անհատների կենսագործունեությունը անհրաժեշտ է նկարագրել իրենց սեփական

[1] **Этноцентризм и культурыный релятивизм**, http://systinfo.ru/kult_ob ject/ etnotsen trizm_i_kulturniy_relyativizm.html, հղման ամսաթիվը՝ 05.03.2019:

[2] Принцип культурного релятивизма/ http://udik.com.ua/books/book-510/chapter-17697/, հղման ամսաթիվը՝ 24.05.2019:

մշակույթի եզրույթներով: Մշակութային ռելյատիվիզմի այս ձևի կարևորագույն ասպեկտը մշակույթը ներսից ճանաչելու ձգտումն է, ինչպես նաև նրա գործառնության իմաստի գիտակցումն է:[1] Այս մոտեցումը մեր համոզմամբ շատ կարևոր է բազմական հասարակությունների դեպքում, որտեղ տարբեր մշակույթների միջև կոնսոցիատիվ խոսույթի հնարավորությունը պայմանավորվում է հենց այս մեթոդաբանությամբ:

Այս առթիվ Տ. Պաշուկովան իրավամբ նշում է, որ հնարավորության դեպքում հարկ է ձևավորել և ուսուցանել արդյունավետ հմտություններ՝ ցույց տալով երկխոսության և համագործակցության սկզբունքների նշանակությունը միջմշակութային հաղորդակցության համար:[2]

Պատմամշակութային գործընթացում մշակութային ռելյատիվիզմի փիլիսոփայական ասպեկտը կապված է մշակութային զարգացման ուղիների բազմակիության ճանաչման հետ: Այն մերժում է մշակութային զարգացման փուլերի պարտադիր էվոլյուցիոն փոփոխությունը և զարգացման մեկ միտումի գերակայությունը: Մի խոսքով՝ Մ. Հերսկովիցի հավատամքն արտահայտված է նրա հետևյալ դատողության մեջ. «Ընդունել, որ իրավունքը, արդարությունը, գեղեցկությունը կարող են ունենալ այնքան դրսևորումներ, որքան մշակույթներ կան, նշանակում է ոչ թե ցուցաբերել նիհիլիզմ, այլ զսպվածություն»:[3]

Ինչ վերաբերում է մշակութային ռելյատիվիզմի գործնական ասպեկտին, ապա այն առավել քան քննարկելի է, քանի որ տարբեր մշակույթներում ռելյատիվիզմը կարող է ունենալ տարակերպ դրսևորումներ: Այս ասպեկտը կարելի է դիտարկել պատմություն-արդիականություն հարթության վրա (օրինակ՝ արդյո՞ք ընդունելի է որոշ մշակույթներում մարդակերությունը, ռասիզմը և այլ բացասական երևույթներ): Այն կարելի է դիտարկել նաև վերացական ֆունկցիոնալիզմի տեսանկյունից (օրինակ՝ որո՞նք են մշակույթների գոյության տարրերը, ի՞նչ տրամաբանությամբ են զարգանում մշակույթները և այլն):[4] Այս հարցադրումները ցույց են տալիս, որ մշակութային ռելյատիվիզմի գործնական ասպեկտը պայմանավորվում է կոնկրետ մշակույթներով և դրանց առանձնահատկություններով: Հետևապես՝ այս գործնական ասպեկտն ունի հարաբերական նշանակություն:

---

[1] **Herskovits M.,** Cultural Anthropology. N.Y.,1955, p. 351.

[2] **Пашукова Т.,** Этноцентризм в межкультурной коммуникации, Вестник МГЛУ. Выпуск 563, с. 60.

[3] **Herskovits M.,** .... նշվ. աշխ., էջ 547:

[4] **Принцип культурного релятивизма**, http://udik.com.ua/books/book-510/ chapter-17697/, հղման ամսաթիվը՝ 24.02.2019:

Որոշ հետազոտողների գնահատականների համաձայն՝ մշակութային ռելյատիվիզմը, ունենալով դրական դերակատարություն եվրոպակենտրոնության, ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարում, վերջին հաշվով հանգեցնում է անվերջ զսպվածության նույնիսկ ամենաանհանդուրժելի երևույթների, նախապաշարմունքների նկատմամբ: Այն հանգեցնում է նաև ժողովուրդների կարիքների նկատմամբ անտարբերության: Մարքսիստական տեսանկյունից մշակութային ռելյատիվիզմն անընդունելի է, քանի որ այն արմատապես հակասում է հետևողականության և տարբեր հասարակական-տնտեսական ֆորմացիաների անհավասարարժեքության սկզբունքին:[1]

Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ մարքսիզմի գաղափարաբանությամբ սոցիալականացված Խորհրդային Միության փլուզումից հետո ինքնաբերաբար ձևով մեծապես պահպանվեց մշակութային ռելյատիվիզմի անհնարինության գաղափարը նաև հետխորհրդային հարավ-կովկասյան բազմական հասարակություններում: Դրանով էլ պայմանավորված են տարածաշրջանի բազմական հասարակություններում՝ Ադրբեջանում և Վրաստանում էթնոցենտրիզմի դրսևորումները, ինչպես նաև մեծամասնական ժողովրդավարության մոդելի նախընտրելիությունը և համամասնականությունից դե ֆակտո հրաժարումը: Եվ ամենևին պատահական չէ, որ մշակութային ռելյատիվիզմը հատուկ է ոչ թե սոցիալիստական կամ հետսոցիալիստական, այլ կապիտալիստական աշխարհին, որտեղ բազմամշակութայնությունը դիտվում է որպես ժողովրդավարական արժեք: Ուստի այս տեսությունը՝ որպես հակակշիռ էթնոցենտրիզմին, գործնականում կարող է արդյունավետ լինել նաև Վրաստանի և Ադրբեջանի դեպքում, քանի որ նրանց բազմական հասարակություններում մի էթնոսի՝ մյուսների նկատմամբ մշակութային գերակայության խնդիրը դեռ լիարժեքորեն լուծված չէ: Ավելին՝ այլ էթնիկ խմբերի մշակութային արժեքների անտեսումը, ոչնչացումը կամ դրանց սեփականումը խորացնում են այդ բազմական հասարակություններում ներքին հակասությունները՝ սրելով հնարավոր կոնֆլիկտային դրսևորումները, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել գերակա և ենթակա էթնիկ խմբերի միջև փոխադարձ անհանդուրժողականության մեծացման, նույնիսկ ատելության, որը հղի է բախումային ներուժով: Այս ռիսկերի չեզոքացման գործում առավել արդյունավետ մոտեցումը կարող է լինել կոնսցիատիվության խրախուսումը թե՛ խոսույթի, թե՛ կոնկրետ գործողությունների միջոցով՝ գործածելով բացառապես «փափուկ ուժ»:

[1] **Арутюнов С.,** Культурный релятивизм, http://www.sati.archaeology.nsc.ru/encyc_p/term.html?act=list&term=474, հղման ամսաթիվը՝ 15.01.2019:

Մեր օրերում քչերը կկասկածեն, որ տարբեր մշակույթների կրողների միջև, առավել ևս, երբ նրանք ապրում են միևնույն պետությունում, հնարավոր է արդյունավետ երկխոսություն: Սակայն ո՞ր դեպքում է հնարավոր իրական արդյունավետ երկխոսությունը: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ երկխոսությունը ստանում է գիտական-էթիկական բնույթ: Կրթված մարդիկ և գիտնականները ոչ միայն լսում են միմյանց փաստարկները, այլև ձգտում են հաշվի առնել դրանց բովանդակությունը: Արդիական է միայն այն խոսույթը, որն ընթանում է բարոյագիտական հարթությունում: Այս պարագայում է, որ շահեկան է դառնում հանդուրժողականության մասին հարցը:[1] Իսկ այդպիսի երկխոսության կայացմանը Հարավային Կովկասի բազմական հասարակություններում՝ որպես «փափուկ ուժ», կարող է նպաստել կոնսոցիատիվ խոսույթը, որը պետք է տարբեր էթնոսներին միավորի բոլորի համար հավասարարժեք խնդրի շուրջ, ինչը, իհարկե, կապված է համընդհանուր անվտանգության գիտակցության ձևավորման հետ:

Այս առումով Ա. Ֆետը նշում է, որ մշակութային ռելյատիվիզմը հետևում է նախօրոք սահմանված նպատակին. հիմնավորել ռասաների և ազգերի իրավահավասարությունը՝ ընդունելով անվերապահորեն բոլոր մշակույթների հավասարությունը: Բոլոր մարդկանց իրավահավասարության սկզբունքը հիմնվում է ոչ թե իրավական ակտերի ճանաչման վրա, այլ դրա հիմքում ընկած է եղբայրության անմիջական զգացումը և բոլոր մարդկանց համերաշխությունը, որն ունի կենսաբանական ծագում և ամրապնդված է մշակութային էվոյլուցիայով:[2]

Լորենցին պատկանող կենսաբանական հայեցակարգի տեսանկյունից բոլոր մարդկանց իրավահավասարության սկզբունքը պետք է դիտել որպես մեր սոցիալական բնազդի մշակութային զարգացման արդյունք: Այս սկզբունքի խախտումը նշանակում է հետընթաց դեպի արդեն իսկ հաղթահարված մշակութային փուլեր՝ դեպի միջնադար կամ հին դարեր, իսկ հատուկ դեպքերում այն նշանակում է սոցիալական բնազդի կենսաբանական մեխանիզմի խանգարում, այսինքն՝ պաթոլոգիա բժշկական տեսանկյունից:[3]

Ա. Ֆետն իրավացիորեն նշում է, որ հավասարության սկզբունքը այն մշակութային ավանդույթի անքակտելի մասն է, որը նախկինում՝ մինչև

---

[1] Мультикультурализм и этический релятивизм, http://studme.org/113 90422/ filosofiya/nenasilie_nasilie, հղման ամսաթիվը՝ 01.13.2019:

[2] **Фет А.,** Культуры и культурный релятивизм, http://modernproblems.org.ru /philosofy/261-culture.html, հղման ամսաթիվը՝ 24.03.2019:

[3] **Фет А.,** .... նշվ. աշխ., հղման ամսաթիվը՝ 24.03.2019:

դրա լիարժեք ճանաչումը, կոչվում էր «քրիստոնեական», իսկ հիմա այն անվանում են «եվրոպական» կամ «արևմտյան» մշակույթ:[1]

Մշակութային ռելյատիվիզմի էությունն արտահայտվում է հետևյալ պարզ բանաձևով՝ «Քանի որ բոլոր մարդիկ հավասար են, բոլոր մարդկային մշակույթները հավասարարժեք են, ապա նրանց միջև ստորակարգություն հաստատելու ցանկացած փորձ համարվում է ռասիզմ»:[2]

Մշակութային ռելյատիվիզմը, որն ամբողջությամբ հակադրվում է էթնոցենտրիզմին, հաշվի առնելով բազմական հասարակության սեգմենտների մշակութային առանձնահատկությունները, ինչպես ցույց է տալիս Նիդերլանդների, Բելգիայի և այլ բազմական պետությունների փորձը, ունակ է բազմական հասարակություններում ստեղծել ժողովրդավարացման իրական հնարավորություն կոնսոցիատիվ մոդելի հիման վրա: Այս մոտեցումը կարող է կիրառելի լինել հարավ-կովկասյան բազմական հասարակական կառուցվածք ունեցող պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի համար այն դեպքում, երբ քաղաքացիական մշակույթի կառուցումը, թեկուզ, դանդաղ տեմպերով, կգրանցի դրական միտումներ: Այս դեպքում մշակութային ռելյատիվիզմի միջոցով էթնոցենտրիզմի հաղթահարումը հարավ-կովկասյան բազմական պետություններում կարող է դառնալ քաղաքական կայունության, տեղաբնիկ ազգերի մշակութային ինքնուրույնության և անվտանգության, ինչպես նաև ժողովրդավարական առաջընթացի կարևորագույն նախապայմաններից մեկը:

Որոշ առաջարկներ՝ ուղղված «փափուկ ուժի» միջոցով հարավ-կովկասյան բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրմանը՝

- կոնսոցիատիվ ժողովրդվարության մոդելի հայեցակարգային հիմքերի, դրա առանձնահատկությունների, առավելությունների և թերությունների, ինչպես նաև տվյալ մոդելի կիրառության միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության վերաբերյալ միջազգային գիտաժողովների պարբերաբար կազմակերպում,
- հարավ-կովկասյան տարածաշրջանի բազմական հասարակությունների ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական սեգմենտների ներգրավվում վերը նշված գիտաժողովների կազմակերպչական աշխատանքներին և գործառնական մասին (ըստ անհրաժեշտության և նրանց առանձնահատկությունների հաշվառումով), ինչը հնարավորություն կընձեռի այդ սեգմենտների ներկայացուցիչներին ուղղակիորեն հաղորդակից լինել կոնսոցիատիվության վերաբերյալ գի-

[1] **Фет А.,** .... նշվ. աշխ., հղման ամսաթիվը՝ 24.03.2019:
[2] Տե՛ս նույն տեղում:

տական քննարկումներին՝ հնարավորություն տալով նրանց հայտնել իրենց դիրքորոշումները և տեսակետները,

• տարածաշրջանի բազմական հասարակությունների տարաբնույթ սեգմենտների մշակութային առանձնահատկությունների վերհանում և դրանց արժևորում, ինչը ենթադրում է նաև իրազեկում տարբեր գործիքներով՝ ուղղված կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի գրավչության խրախուսմանը՝ որպես վերը նշված գործողությունների իրականացման հայեցակարգային հիմք,

• ԶԼՄ-ների և ԶՀՄ-ների միջոցով բազմալեզու հաղորդումների, քննարկումների կազմակերպում և հեռարձակում, նաև՝ համացանցի միջոցով (խոսքը հարավ-կովկասյան բազմական հասարակություններում ազգային-լեզվական սեգմենտների լեզուների մասին է), որոնց ընթացքում քննության կենթարկվեն տվյալ էթնոսների մշակութային առանձնահատուկությունները, դրանց ինքնատիպությունը և կարևորությունը, որտեղ կոնսոցիատիվ մոդելը, ըստ արժանվույն, կներկայացվի որպես մշակութային իրավահավասարության հաստատման լավագույն «փափուկ» գործիքը՝ հիմքեր ստեղծելով նաև էթնիկ էլիտաների ձևավորման համար,

• կոնսոցիատիվության թեմայով ուսանողների փոխանակության ծրագրերի կազմակերպում և իրականացում, տարածաշրջանի տարբեր բուհերի միջև միջուսանողական առցանց քննարկումների կազմակերպում՝ ուղղված բազմական հասարակությունների մշակութային փոխառնչությունների, դրանց յուրահատկությունների քննարկմանը, դրանց՝ միմյանց հետ ներդաշնակ համագոյակցության հնարավորությունների և անհրաժեշտ հիմքերի ձևավորմանը,

• տարածաշրջանի բազմական հասարակություններում երիտասարդ սերնդի սոցիալականացման գործում մշակութային ռելյատիվիզմի հայեցակարգային հիմքերի ներառման միջոցների մշակում՝ որպես խաղաղ և իրավահավասար համագոյակցության նպատակ,

• պաշտոնական դիվանագիտությունից բացի, ոչ պաշտոնական դիվանագիտության՝ հանրային, մշակութային դիվանագիտության իրականացման ժամանակ բազմական հասարակությունների ներդաշնակ զարգացման նպատակին կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի համապատասխանության գաղափարի շրջանառում և քարոզում,

• կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի վերաբերյալ դասական և արդի գիտական հետազոտությունների, լույս տեսած հրապարակումների, տվյալ մոդելին ուղղակի կամ անուղղակի առնչվող գիտական գրականության թարգմանություն տարածաշրջանի բազ-

մական հասարակությունների սեգմենտներին հասանելի լեզուներով, ինչը հնարավորություն կտա նրանց հաղորդակից դառնալ, սպառել, յուրացնել այդ գաղափարը՝ փորձելով ինքնանույնականանալ դրա հետ՝ արդյունքում տվյալ սեգմենտների մոտ ձևավորելով մշակութային իրավահավասարության պահանջատիրություն՝ ուղղված գերակա էթնոսների իշխանությանը:

Այսպիսով՝ հարկ է նշել, որ հարավ-կովկասյան բազմական հասարակություններում «փափուկ ուժի» գործադրման միջոցով կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրարկմանն ուղղված վերը թվարկված առաջարկների շարքը ժամանակի ընթացքում կարող է համալրվել նոր մոտեցումներով և գործիքներով: Դա նշանակում է, որ «փափուկ ուժը» բավականին ճկուն ռազմավարություն է տարածաշրջանային արդյունավետ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից: «Փափուկ ուժի» իրացման տեսանկյունից մշակույթի դերն առաջնահերթ է: Այն պետությունները, որոնց մշակութային հենքը թույլ է, չեն կարող օգտագործել «փափուկ ուժը» իրենց շահերի իրացման նպատակով: Սակայն մշակութային հարուստ ժառանգություն, ինքնատիպություն ունեցող ժողովուրդների և պետությունների դեպքում «փափուկ ուժի» գործադրմամբ ազգային-պետական շահերի իրացումը կարող է ավելի արդյունավետ լինել: Հետևապես՝ ՀՀ-ն, որն ունի «փափուկ ուժի» գործադրման համար պահանջվող մշակութային բավարար ներուժ, ըստ անհրաժեշտության և նպատակադրումի, կարող է իրականացնել հարավ-կովկասյան տարածաշրջանի բազմական հասարակությունների կոնսոցիատիվացման նախ և առաջ տեսական հիմքերի մշակման գործառույթ՝ հետագայում դրա գործնական կիրառության քաղաքականության մշակման և իրականացման հեռանկարով:

Эмиль Ордуханян, Роль культуры в процессе внедрения модели консоциональной демократии в многосоставных обществах Южного Кавказа путем «мягкой силы» - В статье рассматривается роль культуры в процессе внедрения модели консоциональной демократии в многосоставных обществах Южного Кавказа посредством стратегии «мягкой силы». Среди стран Южного Кавказа изучается культурный потенциал Армении в качестве отдельного фактора применения «мягкой силы». Опираясь на широко распространенное культурное наследие армянского народа в регионе Южного Кавказа, утверждается, что Армения, как исторически самобытное культурное государство, имеет реальную возможность стимулировать модель консоциональной демократии в плюралистических обществах региона при наличии такой цели и путем разработки в случае

необходимости стратегии «мягкой силы». В качестве средств для достижения такой цели в статье приводятся некоторые предложения.

Emil Ordukhanyan, The Role of Culture in Process of Consociational Democracy Model Implementation in South Caucasus Plural Societies by the Use of "Soft Power" - The article explores the role of culture in the process of consociational democracy model implementation in South Caucasus plural societies through the strategy of "soft power". Among South Caucasus countries, the cultural potential of Armenia as a separate factor in the use of “soft power” is observed. Based on the widespread Armenian cultural heritage in the South Caucasus region, it is argued that in case of appropriate goal setting, Armenia by its historically original culture, has a real opportunity to stimulate the consociational democracy model in plural societies of the region by developing, if necessary, a “soft power” strategy. As a means to achieve this goal, the article provides some suggestions.